Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3382

UP=1528

2178b ~~1339.~~

3,4

ՅԱՂԱԳՍ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ, ՆՊԱՏԱԿԻ ԵՒ ԱՐԴԵԱՒՆՑ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ

Եւ յատկապէս յաղագս Վաւերագրութեան

ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ։

Հրատարակեալ է քանզի՝ եւ ամենայն ընդհանրութեան օգտին է. ըստ Քրիստոսական դարուն։ ՌՃԾ։ Տեմ. ՌԺ. 15։

3.382

No. 207.

ON THE

AUTHORITY, PURPOSE, AND EFFECTS

OF

CHRISTIANITY,

AND

ESPECIALLY ON THE DOCTRINE OF REDEMPTION.

IN ARMENIAN.

1500 Օրինակք Տպագրեալք ՝ի գաղթականաց Մարդասիրական Ճեմարանին, ՝ի Հռիւսիմբէրբ, 1828։

՝Ի ԿԱՆԿԱԹԱ

Երբեմն ոչինչ այնպէս բռոյայայտ ցուցանէ զպատուականութիւն սէր գրոց, ոչինչ այնպէս պարզապէս յանդիման առնէ մեզ զմեծութիւն և զերկնային ծագումն նոցա, որպէս ծանօթութիւնն զոր ընթեռնլով քաղեմք անտի յարագս բնութեան և հուէն ԱՅ։ Ուստ ասեն զմեզ զբազան մատեանք հնոց և նորոց կտակարանաց, զի չէիք ինչ այլ եթէ՝ բայց միայն որ էիք։ Նա կեայ յաւիտեանս յաւիտենից. նա է ստեղծիչ և նախախնամ[illegible] և պահպանիչ տիեզերաց. նա է ամենաբերք, ամենակարող, ամենագէտ և ամենիմաստ. նոյաւ կեամք. նոյաւ շարժիմք և ի նմանէ ունիմք զմեր լինելութիւն. նա է աղբիւր ամենայն բարի տրոց և կատարեալ պարգևաց և յատկապէս յաւիտենական կենաց. նա է սէր և արդար և Աստուածարիտ և հաստատիչ և ամբիծ և երկայնամիտ և ողորմած. նա է «էր». նա է քաղցր և գթած Հայր նոցա՝ որք երկիւղածութեամբ գնան ի Ճանա-

պարհ նորա և հնազանդին օրինաց նորա։ և թէպէտ է նա Աստուած անհուն և յաւիտենական, սակայն ողորմածութեամբ իւրով ինամ ունի նա ի վերայ ամենայն դուշնաքեայ օգտիւ ստեղծուածոց իւրոց։ ոչ անկանի Ինքնիշխանն մի յերկիրս առանց կամաց նորա։ այլ մեր և ամենայն իսկ հեր գլխոց թուեալ է։ Նա առանիկ՝ և կարի պատշաճ է մեզ աստանօր խմաստասիրել զի Աստուծոյ ամենայնի նկարագրի յԱստուծոյ անդ իբրև էակ ոմն ամենամաքուր։ այնպէս զի յաչս նորին ատելի և գարշելի է ամենայն տեսակ անօրէնութիւն՝ զոր գործիցեմք խորհրդով կամ բանիւ և կամ գործով։ Ապա ուրեմն այսմ գիտեցայ զի առանց սրբութեան սրտի ոչ ոք կարէ տեսանել զամենակալ Աստուծն երկնի։

Արժան է աստանօր նկատել զի արք ճշմարտալք ստուգագոյն և միաձայն վկայութիւն հաստատեն զմիութիւն երկնաւորին Աստուծոյ։ յամ Հաւս և յամ գիրս իւրեանց խոստովանին թէ մի է Աստուած։ և՝ ի վերայ այսր սկզբանց իբրև՝ ի վերայ հաստատագոյն հիման կառուցանեն նոքա զբովանդակ կազմուած կրօնին քրիստոնէութիւն։ և մեր պատկառանօք և խոնարհութիւն զգիտալ այնոյիկ ճշմարտան վարդապետաց՝ ուսանիմք յողջամիտ վարդապետութենէ նոցա զի

Աչ 'ի մեծախորհուրդ և 'ի մարդասիրական անօրէնութիւս իւր՝ զոր կարգեաց վասն փրկութեան հոգւոյ մերոյ՝ յայտնեաց զինքն ազգի մարդկան յերիս անձինս. այսինքն՝ 'ի Հայր, յՈրդի և 'ի սուրբ Հոգի։

Արդարև՝ անհնար է կարճատես մտայ մերոյ իմանալ զանսահմանելի խորհուրդ սրբոյ Երրորդութեան և զանճառելի խորհուրդ միութեան Աստ. և ոչ երբեք միաք մարդոյ բաւական լիցի ճանաչել զայն կամ լնդ սահմանաւ արկանել. բայց սակայն որք միանգամ ճանաչեն զչարութիւն և զնեղգործութիւն եռանձնեայ Աստուծոյ, գերագոյն համարին զվարդապետութիւն խորհրդոյ սքեայ Երրորդութեան. և անեղկեայ հաւատով խոստովանին, զի թէպէտ Հայր և Որդի և Հոգին սուրբ զանազանին անձամբք, սակայն ըստ ամենայնի նոյն են էութիւն և բնութեամբ։ Գլարտ և պատշաճ է մեզ ողջամիտ վարդապետութեամբ եզրակայուցանել զխորհուրդ սքեայ Երրորդութեան յընթերցմանէ սուրբ գրոյ, յորս Ստեղծիչն Փրկիչն և Մխիթարիչն յայտ յանդիման երևին մեզ երբեմն հաւասարակ աղբիւրք հոգեկան բարեաց մերոյ և երբեմն հաւասարակ առաւելեալք մերոյ հաւատոյ և հնազանդութեան. և ոչ այսչափ միայն՝ այլև ուսանիմք զՀայրատուն սքեայ Երրորդութեան

յամ՝ գիրս՝ յորս որոշակի յիշատակի ՅԱԾՈՒԹԻՆ Որդւոյ և սրբոյ Հոգւոյն։ ՏԷՌ ՄԱՍ ԷԷ. 19։ Յովհ. Ա. 26. Ա. 26. Ա. 13–15. Է։ Կորնթ. Ա. 14։ Յովհ. Ա. 1–3, 12։ Գործք. Ա. 2։ Ա Կորնթ. Ա. 11։ Է. Կորնթ. Գ. 17։

Նա և՝ ի գիրս ՅԱՅԱՏՈՒԹԻՆՆԻՑ յայտնեալ կան վասն մեր կենցաղագուտ բանք Աշնարտութեան։ Ի բազմապատիկ բանից սուրբ գրոց յայտնապէս ուսանիմք, զի մարդս ոչ միայն բաղկանայ ՝ի մարմնոյ՝ այլ՝ ի Հոգւոյ ևս. և յորժամ մարմինն մեռանի, Հոգին տակաւին մնայ կենդանի։ ՄԱՍ. Ա. 28. Ա. 26. Ա ԹԷՍԱՂ. Է. 23։ ԵԲՐ. Ա. 39։ ՂՈՒԿ. Ա. 19–31. Է. 38. Էէ. 42. 43։ Է Կորնթ. Ե. 1–8։ Նա և ուսանիմք ՝ի բանից սրբոց՝ զի յաւուր կատարածի մեռեալք յարիցեն ՝ի գերեզմանաց և մարմինք նոցա միաւորեսցին դարձեալ ընդ Հոգւոյ և եղիցին անապական։ Յովհ. Է. 28. 29։ Ա Կորնթ. Ա։ Այս վաղանցիկ կեանք մեր է միայն ժամանակ ինչ կարգեալ առ՝ ի փորձել և մաքրել զմեզ. և ՝ի հանդերձեալ կեանսն մեք ամենեքեան կանգնեսցուք յատենի Տն մերոյ Քրիստի. և ըստ գործոց մերոց կամ ընկալցուք զկեանս յաւիտենական և կամ զտանջանս յաւիտենականս։ ՄԱՍ. Է.

31–46։ Հռովմ. Է. 6–11։ Ճէ. 10։ Յայտ. Է. 12–15։ Դալանեալ ուսանիմք ՝ի սուրբ գրոյ անտի, զի մարդս ստեղծաւ ըստ պատկերի և ըստ նմանութեան Աստուծոյ։ բայց յաղթեալ ՝ի վրձանաց բանսարկուին՝ կորուցս զպայծառութիւն ճաճային նմանութեան։ և այժմ գոլով նորա անկեալ ընդ մեղաւք և ապականեալ բնութիւն և ոչ ծնեալ յաւազանին մկրտութեան՝ յօժարամիտ է նա ՝ի գործս չարութեան։ սիրտ նորին է քան զամ։ ամենեքեան խոտորեցան, ՝ի միասին անպիտանացան։ Ո՛չ ոք է որ առնէ զքաղցրութիւն, և ո՛չ ոք է մինչև ՝ի մի։ Քանզի ամենեքեան մեղան։ և նուազեալ են՝ ՝ի փառաց անտի Աստուծոյ։ Երեմ. Ճէ. 9։ Հռովմ. Գ. 1–19. 23։ Եսայի, Ճէ, 6։ Մատթ. Ճէ. 19։

Այսպիսի ահաւոր բանք պարտնակեալ կան վասն մեր՝ ՝ի գիրս աճաչնչ մատենից։ Ապա ուրեմն ո՞ւր գոյ մեղ յոյս փրկութեան. զմեզ ասեմ՝ որք խոնարհեալ ՝ ՝ի մերոյ նախնական փառաց՝ անկաք ընդ ծառայութիւն մեղայ. յօժարամիտ եմք ՝ի գործս չարութեան, և լցեալ եմք ազգի ազգի յանցանօք. բաժանեցաք և օտարացաք բնութեամբ մերով յարդար և յամենասուրբ Աստուծոյ. և յայսմանէս հասցէ մեզ բաժանիլ ՝ի նմանէ յաւիտեան ՝ի հանդերձեալ

կեանան անդ։ Արդարև պարտ է մեզ յուսալ միայն յաջողմանէն ԱՅ 'ի ձեռն վրկչին ազգի մարդկան։ Իրաւ է մեզ աղաղակելով ասել՝ Էնէ ո՞չ գոյր մեզ Փրկիչ Մեսոնէաթ։ Նա Էնէ ո՞չ գոյր մեզ Աղաւթիչ գնոյութ 'ի երկրաւորն յուխտնակոն։

Սին իրի 'ի վախճան ամի արժանի է մեզ գիտել՝ թէ զինչ է վարդապետութիւն ճանաչումն մասնիկ յաղագս Տն մերոյ և Փրկչի՝ Յսի Քրի։ Ընթեռնումք 'ի սուրբ գիրս զի Քս է բանն և Որդին Հօրն ԱՅ ամենակալի։ Նա էր 'ի սկզբանէ ասաւ ՅՈՒՀ։ Ա։ ԺԷ։ 5։ Մէտ։ Է։ 2։ Զի նովաւ հաստատեցաւ ամենայն՝ որ ինչ յերկինս՝ և որ ինչ յերկրի։ Կող։ Ա։ 16։ Եբր։ Ա։ 2։ 10։ Եւ առանց նորա եղև և ոչինչ՝ որ ինչ եղևն։ Յովհ։ Ա։ 3։ Նովաւ կեանք էր՝ և կեանքն էր լոյս մարդկան։ Էր լոյս Աշխարհի՝ որ լուսաւորառնէ զամ մարդ՝ որ դալոյ է յԱշխարհս։ Յովհ։ Ա։ 4։ 9։ Նա և հայր մի են։ Յովհ։ Ժ։ 30։ Վասն որոյ և նա է ԱՅ։ Յովհ։ Ա։ 50։ Նա է Տէր և արդարութիւն մեր։ Երեմ։ Է։ 5։ 6։ ԱՅ հշոր։ Եսայ։ Ա։ 6։ ԱՅ Աշխարհի։ Ա Յովհ։ Է։ 20։ ԱՅ մեծ։ Տէր։ Է։ 13։ Որ է 'ի վերայ ամենեցուն ԱՅ օրհնեալ յաւիտեան։

Նա է՝ որ յանդիմանէ զերկիրս՝ եւ զսիրեալս։
նա գիտէ զնորհուդս մարդկան։ եւ տայ ծա-
ռայիցս իւրոց զամ՝ ոգեւորս եւ զնորհս հոգւոյ։
Յայտ։ Է։ 23։ Գործք։ Է։ 33։ Է։ Կորնթ։
ԺԷ։ 9։ Եփես։ Բ։ 2։ Զնա պարտիմք հաւա-
տալ՝ առ նա աղօթել՝ զնա փառաբանել եւ նմա
երկիր պագանել։ Յովհ։ Է։ 16։ Գործք։ Է։
59, 60։ Է Կորնթ։ ԺԷ։ 8։ Եբր։ Ա։ 6։ ԺԸ։
21։ Յայտ։ Է։ 13։ Նա զամ՝ յամի լու-
սեփեսն։ Ա։ 23։ Յա Քա՝ երկիկ՝ եւ այսօր։
նոյն եւ յաւիտեանս։ Եբր։ ԺԷ։ 8։ Նա է
ալֆայ եւ օմեգա։ սկիզբն եւ կատարած։ առա-
ջին եւ վերջին։ Յայտ։ ԺԷ։ 13։ Նա եւ ու-
սանիմք՝ ի գրոց ասծաշունչ մատեանից զի յոր-
ժամ եկն լրումն ժամանակին՝ առաքեաց ասծ
զորդին իւր՝ որ եղեւ՝ ի կնոջէ՝ եւ եմուտ լնդ
օրինօք։ Գաղ։ Դ։ 4։ Բանն մարմին եղեւ։
Յովհ։ Ա։ 14։ Ծնաւ նա իբրեւ մանուկ յաշ-
խարհի՝ եւ Հշմարտապէս յինքն էառ զբնութիւն
մեր տկար։ այլ փոքրագոյն է ասմի ըստ նմանու-
թեան առանց մեղայ։ Եբր։ Է։ 14։ Դ։ 15։
Հրաշէրնա յոչի բարերարութիւն ազգի մարդկան։
այսինքն՝ թաշակելով զանոստ հիւանդացեալսոյ։
տալով զաչս կուրացեալ եւ զականջս խլեցեալ՝ յարու-
ցանելով զմեռեալս՝ ի գերեզմանաց եւ քարոզե-

լով զաւեւտարանն աղքատաց։ մատնեցաւ նա ՝ի
ձեռս անօրինաց և մեռաւ ՝ի վերայ խաչին։
յերրորդում՝ աւուր յարեաւ նա ՝ի մեռելոց։
և ամբարձեալ յերկինս՝ նստի ընդ աջմէ
Հօր ամենակալի։ վասն զի ելիցուք վերսին զայն
անհոն և անքննելի փառս ՝ի ձայնին՝ զոր ունէր
նա ընդ Հօր յառաջ քան զլինելն ՝ի։ Յովհ։
ԺԷ։ 5։ Եբր։ Ա։ 3։ Փառաւորեայ զնա Հայրն
Ա՛ծ և կարգեայ ՝ի վերս ամ՝ իշխանութեան և պատուոյ
և զօրութեան և տէրութեան՝ և ամ՝ անուան անուա-
նելոյ՝ ոչ միայն յՀեսս յայսմիկ՝ այլև ՝ի Հանդերձ-
ելոցն։ Եփես։ Ա։ 21։ Ի վախճան ամի վերջ
տայէ նա բոլանդակ վրկութիւն անօրէնութեանց
իւրոց՝ գալով վերսին Հանդերձ ամ՝ Հրեշ-
տակօք իւրովք սրբովք առ ՝ի դատել զկեն-
դանիս և զմեռեալս ՝ի վերջին տիեզերական
դատաստանի։ Մատ։ ԺԷ։ 40–42։ ԷԺ։ 30։
31։ Ա Կորնթ։ ԺԷ։ 25։ 28։

Այլ արդ՝ յիշատակեալ մեր ՝ի վերոյ
զոմանս ՝ի գլխաւոր բանից սբ գրոց յաղագս
որոյիսուն և պատմութիւն Հն մերոյ Յեսի Քրիստի,
արժան է այժմիսկ և իսկ Հառել զվարդապետու-
թիւն փրկագործութիւն ազգի մարդկան։ բայց
յառաջ քան զսկսուած առաջիկայ բանիս՝ պատ-
շաճ Համարիմք առաջի արկանել ընթերցողայ

զինուոր մի ոչիւրինոյ։ Զոնչ էր արդեօք վախ-
ճան և զուգակշիռ նոպատակ Որդւոյն Աստ որ
լցեալ է անհնութեամբ փառաց և է հակիրճ Հօր
և փառակից աստ Հոգւոյն՝ առ՝ի հրաշափառա-
պէս իջանել յերկնից և զանձն իւր խոնարհ-
եցուցանել՝ առնուլ զմերոնակ բնութիւն, և
մարդկային բնութեամբ կրել զամ թշնամանս և
զանարգանս և զարհամարհանս մեղաւորաց։ և
՝ի վերջոյ մեռանիլ՝ ի վերայ խաչին չարաչար
և խայտառակ մահուամբ։

Յորժամ զմտաւ ածեմք զկատարեալ
յարմարութիւն՝ որ միշտ կայ և յամենայնի երևի
՝ի գործս բնութեան և տեսչութեան, ՝ի մէջ
պատճառաց և գործոց, ՝ի միջոցի և ՝ի վախճան
գործոցն՝ յորժամ այսպէս զհիմն ձեռնարկութեամբ
մերոյ հաստատեմք՝ ի վերայ նմանական
հաւասարութեամբ՝ միտք մեր ապշեալ զարմանայ
ընդ անհաւելի խորհուրդ մարդեղութեամբ փրկչին
մերոյ Քրիստոսի։ արդարև անհնար է մեզ
կարծել զի դեպն վասն յոգնելոյ ՝ի զհշմարտու-
թիւնն երկնային՝ բարձրեալն խոնարհեցեալ և
էջ յերկնից առ՝ի կեալ և չարչարիլ և մեռանել յոտ
ասա իբրև զմարդ։ Գիտեմք՝ ի փորձոյ զի ամենայն ածարեալ անձն՝ որ նշա-
նապատրաստութեամբ հաստատեր զիւր երկնային առա-

քելութիւն՝ բաւական էր առ՝ ի քարոզել յոի զՔրիստոսի կրօնին յայտնութիւն. և յայտնի է ամենեցուն զի յաղագս այսր պատճառի քրիստոնեայք հաւատան զօրինադրութիւն՝ յառաջագոյն աւանդեալս Հրէից՝ ի Մովսիսէ, և Քրիստոսի համարին զվարդապետութիւն՝ զորս առաքեալքն աւանդեցին հետևողացն Քրիստոսի։ Արդարև յայտնելն զՔրիստոսի էր մի՝ ի գործոցն փրկչին մերոյ, որ է գլուխ մարգարէից, և ոչ այսչափ միայն, այլև փրկիչն մեր ամբիծ և ողորմած վարուք և կենցաղավարուք իւրով յոի կարգեաց զայնպիսի օրէնսդիր կատարելութիւն՝ որով պարտ էր աշակերտաց նորա յամ ժամանակս ուղղել և բարեկարգել զվարս իւրեանց յոի աստ։ Արդ՝ թէպէտ կարի կենցաղագուտ և փրկաւէտ են ազգի մարդկան արդիւնք այսոցիկ գործոց փրկչին մերոյ, սակայն խորհուրդ մարդեղութեան նորա փակէ ընդ իւրով զևս գերագոյն և մեծամեծ արդիւնս բարեբարութիւն առ մարդիկ. սոքին իրի և արժան է մեզ մակաբերել, զի՝ ի խոնարհել՝ ի բարձրութիւն երկնային փառաց իւրոց, յառնուլն նորա զտկար և զվշտակիր բնութիւն մարդկային, և՝ ի մատնել զանձն իւր չարաչար մահուան խաչելութիւն, նոպատակք Որդւոյն Աստուծոյ էին առաւել քան զանոնք։ Յորս

ժամ զմտաւ ածեմք զանհուն մեծութիւն և զինքնիշ-
խան ամենակարողութիւն երկնային Այրեցելին մե-
ռոյ, յորժամ խորհիմք զզարմանալի սէրն՝ զոր ե-
ցոյց մեզ ողորմած այրեցեալն իւրով, արդարև ան-
հնար է մեզ չհաւատալ զի Քո անհուն ողոր-
մածութիւն իւրով մարդանալով և վասն մեր մեռանե-
լով կամիցաս լցուցանել զՁեզ ոչիտոյս հոգևոր
կարօտութիւն մերոյ։ Աղաքէն եթէ՝ ի ձեռն տնօ-
րէնութեան Քոյի զոչինչ պատուոյս գտանիցաք՝ բայց
միայն զծանօթութիւնս և զվարատս և զօրինակս,
հոգեկան կարօտութիւն մեր ոչ լնանիցուր բնաւին։
Եւ այսպէս տիարքս և ապականեալքս տակա-
ւին յախտս մեղայ թաւալեցաք և մատնեցաք զան-
ձինս յաւիտենական կորստեան։ Լոյսն Աշխարհ-
տուն՝ զոր՝ ի քարոզութիւն աւետարանին ընկալաք՝
զթշուառութիւնս մեր սաստկայուժանէր և
զկորուստն մեր առաւել ահաւոր և սարսափելի
գործէր։ Աղա ուրեմն ո՞վ ոք իցէ՝ որ զվէրս
և զյաւս սրտի իւրոյ գիտասցէ, և ոչ իմանայցէ
թէ ունի զկարօտութիւն, ոչ միայն ծանօթութեան,
այլ և հաշտութեան ընդ Աստուծոյ։ ոչ միայն լուսոյ
այլ և կենաց։ ոչ միայն խրատուց և բարի
օրինակաց՝ այլ և կարողութեան առ՝ ի հնազան-
դիլ միոյն և հետևիլ միւսոյն։ Աւետարանն
Տն մերոյ և Փրկչի ոչ տայ մեզ զպատգամ

աւետեայ, եթէ ոչ քարոզիցէ մեզ կամակոխեալ
`ի տանջանաց մեղայ և զբաղ չիցի `ի վերայ
հոգւոյ։ Այսպէս և այսպէս միայն լցուսցէ
նա զամ զպիտոյս հոգևոր կարօտութեանս մերոյ։

Այլ արդ՝ յայսպիսի պարզ և դիւրին
ձեռնարկութեանս արժան է մեզ եղբարկայու-
յանս՝ զի արդարև ՏԷՐՆ մեր՝ ՅՈՒՐՔՈՒ ԵԿԵՑԱՌ
`ի պարգևել մեզ ոչ միայն գնանօթութեան և
զխրատ, այլ և զթողութեան և զմրկութեան։ Բայց
դիւրին է ընթերցողաց տեսանել՝ զի վարդա-
պետութեան փրկագործութեանս ոչ հաստատի բանիւք
մերովք միայն։ Բազում՝ վկայութիւք գոն `ի սբ
գիրս՝ ոչք պարզապէս հային `ի հրաշալի խոր-
հուրդ սոյ փրկագործութեան, և հաստատեն զայս
բանս մերոյ ձեռնարկութեան։

Առաջին բան սբ գրոյ՝ որ զգալուսան
Մեսիային ակնարկէ՝ քարոզէ զմեծ խորհուրդ
առաքելութեան նորա։ Եւ եղիցի թշնամութիւն `ի
մէջ քոյ և `ի մէջ կնոջդ. և `ի մէջ զաւակի քո
և `ի մէջ զաւակի նորա. նա պատուհասցէ զգլուխ
քո. և դու սպասեսցես նորա զարշապարն։
Ծնն. Գ. 15։ Աստուածն մեր՝ ոչ բոլանդակ
միանգամայն ընդունին, զի զաւակ կնոջն ասասցուն
նշանակէ զՄեսիան. և օձն նշանակէ զսա-
տանայն՝ զմոլորն ամենայն մեղայ և չարութեան։

Վասն որոյ և ուսանիմք ՝ի գուշակութիւն աստի, զի թէ սպասէր ջախջախել զգլուխս օձին, կամ լաւ ևս ասասցիս՝ կորուսանել զսատանայն և լուծանել զամ գործս նորա։ Տես յԵբր. Բ. 14. Արդ՝ որովհետև մանկունք հաղորդեսային արեան և մարմնոյ, և ինքն իսկ մերձաւորութիւնս կիսորդ եղ՝ նոցունց. զի մահուանն իւրով կոծեսցէ զայն, որ զիշխանութիւն մահուան ունէր, այսինքն է՝ զսատանայ։ Եւ՝ Յովհ. Գ. 8. Եւ որ առնէ զմեղս՝ ՝ի սատանայէ է, զի՝ ՝ի սկզբանէ սատանայ մեղանչէ. վասն այսորիկ յայտնեցաւ որդին այ. զի լուծցէ զգործս սատանայի։ Մահուամբ իւրով Մեսիայն ունէր նուաճել կատարեալ յաղթութիւն զթշնամին մեր հոգեկան. այս է վարդապետութիւն մի՝ որ կարի քաջ համաձայնի ընդ մարգարէութեանն Եսայեայ յաղագս փոխանորդական և քաւչական շարչարանայ նր։ Նա զմեղս մեր բառնայ՝ և թող մեր շարչարի, և մեք համարեցաք զնա՝ ՝ի յաւս՝ և՝ ՝ի հարուածս՝ և՝ ՝ի շարչարանս իբրև յԱՍ։ Բայց նա վիրաւորեցաւ վասն մեղայ մերոյ. և պատժեցաւ վասն մերոյ անօրէնութեան. խրատ խաղաղութիւն (կամ որով գտաք զխաղաղութիւն մեր) մերոյ՝ ՝ի նմա. և նորա վէրքն բժշկեցաք։ Ամենեքեան իբրև ոչխարք մոլորեալք՝ այր՝ ՝ի Հանապարհի իւրում մոլորեցաք. և Տէր մատ-

նեայ զնա աւ մեղս մեր։ Եւ նա առ վշտին ոչ բանայ զբերան իւր. իբրև զոչխար ՝ի սպանդ վարեցաւ. և իբրև որոջ առաջի կտրչի անմռունչ կայ. այնպէս ոչ բանայ զբերան իւր .... վասն այսորիկ նա Ժառանգեսցէ զբազումն. և զաւար հզօրաց բաշխեսցէ. փոխանակ զի ՝ի մահ մատնեցաւ անձնն։ և ընդ անօրէնս համարեցաւ. և նա զմեղս բազմաց վերացոյց՝ և վասն անօրէնութեանց նոցա մատնեցաւ։ Եսայի. ԺԳ. 4–12. տես նա և ՝ի Յովհ. ԺԷ. 38. 41։

Արդարև՝ այս միսիթարական բանս սուրբ գրոց վերաբերի ՏՆ մերոյ Յսի. և Ճշմարտաբար հաստատի ոչ միայն ՝ի հզօրեղ վկայութիւնս՝ որ ՝ի մարգարէութիւնս անդ փակեալ կայ, այլ և ՝ի բաղում՝ վկայական բանիցն՝ զոր յառաջ բերեն գրիչքն նորոց կտակարանի։ Ապա ուրեմն ոՀմ ոչ յայտնի երևեսցի զի սովաւ մեղաւորաց գրկուելոյ՝ բարոյի՝ չարչարանօք և մահուամբ ամենազօր Փրկչի։ Զսոյն զայս վարդապետութիւն հզօրեղ վկայութիւնս հաստատէ բանն այն՝ զոր ասայ Աստ Մեսիային, ոչ և գրեալ է ՝ի մարգարէութիւնս Զաքարիայ։ Եւ դու ոգեմբ ուխտի քոյ արձակեցեր զկապեալս քո յանջրէ գէոյ։ Եւ նստցիք յամուրս կապեալք ժողովրդեան. Զաք. Ի. 11. 12։

Արդ՝ այսոքիկ են բանք մարգարէութեան յաղագս քաւութեան մեղայ մարդկան՝ որով եղև սկիզբն առեւտրականն անօրէնութեան։ Նա և արժանի՝ ի միտ առնուլ զի բազմադարեան օրինադրութի զոհիցն և պատարագացն Հրէից՝ էր սուրբ էր հանդերձելոյն բարեաց. և վերաբերէր՝ ի նոյն վարդապետութի վրկագործութեան։ Այս բան մանաւորապէս ակնարկէ զզոհութիւն գառին՝ ի տօնի զատկին, և զպատարագ զուարակայ և նոխազայ՝ ի մեծի աւուրն քաւութեան։ Վասնզի Յա Քն՝ գառն զենեալ՝ ի սկզբանէ Տի, է ՚ա առաքելոյն Պօղոսի զատիկն մեր՝ որ վասն մեր զենաւ. ՚ա Կորնթ. Է. 7։ Նա և յայտնապէս երևի յառաքելական թղթոյն առ Եբրայեցիսն, զի քահանայապետն՝ որ մատուցանէր զպատարագս նախ վասն մեղայ իւրոյ և ապա վասն ժողովրդեանն, և՝ ի ժամ պատարագին մտեալ՝ ի տեղին սրբութեան՝ յանէր զարիւնն՝ ի վերայ սեղանոյն, էր օրինակ ամենօրհնեալ փրկչին այնորիկ՝ որ եմուտ յերկինս վասն մեր՝ և յանէ զարիւն իւր՝ ի վերայ սրտիկ մերոյ. և միով պատարագաւ կատարեաց զսրբեալսն՝ ի մշտնջենաւորս. Հոմոմոէ՚ զՆոս. Գլ Ճ՚, ընդ Եբր. Ը. 10։

Բայց սակայն առ՝ ի կործանել զմեքե-

նայս սատանային՝ զոր Մեսիայն Հանդերձեալ էր
յաղթահարել՝ ոչ միայն պիտոյ էր պատարագ
քաւուն՝ այլև գերագոյն զօրութիւն ինն սրբուն։
Յաղագս այսորիկ Աստ խոստացաւ առ Ժամանա-
կօք մարդարէից սրբել զվերջ ժողովրդեան
իւրոյ քաւութեամբ և մաքրել զսիրտս նոցա ար-
դեամբք երկնային սրբութեան. ոչ է տեսանել՝ ի
գիրս մարգարէութեան հնոյ կտակարանին՝ յորս
գուշակին գալուստ և տնօրէնութիւնք Մեսիային,
զոր և ընդունին Հրէայք և Քրիստոնեայք։
Այսպէս ասէ Տէր Աստ՝ որ արար զքեզ՝ և
ստեղծ զքեզ յորովայնի՝ և տակաւին օգնական-
ուն գոյես։ Մի երկնչիր ծառայ իմ Յակովբ՝
և սիրելեալդ իմ Իսրայէլ զոր ընտրեցի։ Զի ես
տայ զջուր ի ծարաւոն՝ որոյ գնան յանջրդուպ.
եղից զոգի իմ՝ ի վերայ զաւակի քոյ՝ և զօրհ-
նութիւն իմ ի վերայ որդւոյ քոյ։ Եսայի՝ Խ. 2.
3։ Եւ յանեպիսի՝ ի վերայ ձեր ջուր սուրբ. և
սրբեսջիք յամպղծութենէ ձերոյ. և յամ կռոց
ձերոյ սրբեսցիս զձեզ։ Եւ տայ ձեզ զսիրտ
նոր. և զոգի նոր նորոգեցից՝ ի ձեզ։ և հանիցս
զսիրտն քարեղէն՝ ի մարմնոյ ձերոյ. և տայ
ձեզ զսիրտ մարմնեղէն։ Եւ զոգի իմ տայ ձեզ.
և արարիցս՝ զի յարդարութիւն իմ գնայցէք՝ և
պիրապուն իմ պահիցէք. և առնիցէք զնոսա։

Եզեկ. Լբ. 25-27։ Այսոյիկ գուշակութեան կարի քաջ համաձայն է բանն Երեմիայի՝ որում նկարագրէ զերեւելի հանգամանս նորոյ ուխտին։ Այլ այս է ուխտ՝ զոր ուխտեցից տանդ Իսրայելոյ աւուրցն այսոցիկ՝ ասէ Տր. տայ զօրէնս իմ ի միտս նոցա՝ և ի սիրտս նոցա գրեցից զնոսա և եղէց նոցա յԱՍ. և նոքա եղիցին ինձ ի ժողովուրդ։ Եւ մի՛ ևս ուսուցանիցեն իւրաքանչիւր զընկեր իւր. իւրաքանչիւր զեղբայր իւր ասէ՝ թէ ծանիր զՏր. զի ամենեքեան ծանիցեն զիս՝ ի փոքրկանց նոցա մինչև՝ ի մեծամեծս՝ ասէ Տր. զի քաւիչ եղէց անիրաւութեան նոցա. և զմեղս նոցա ոչ ևս յիշեցից. Երեմ. Լա. 33. 34։

Զհնարս նորոյ ուխտին կոչէ Եսայի հաւատարիմ սրբութիւնքն Դաւթի՝ այսինքն Մեսիայի, որ էր՝ ի զաւակէ Դաւթի և կարգեալ էր յԱՅ բարձրելոյ լինել՝ ի վկայութիւն հեթանոսաց. իշխան և հրամանատար ազգաց. Եսայի. Ծէ, 3. 4։ Նա՛ ասանիկ՝ ի գիրս մարգարէութեան յիշատակեալ կան բազում բանք յաղագս տիեզերական իշխանութեան և անվախճան տէրութեան այսր իշխանին խաղաղութեան. յորմէ և մարթէ եզրակացուցանել՝ զի նա ինքն հանդերձեալ էր տնօրինել զայսոսիկ հոգեկան ոլորգեան և մատակարարել զոյն սրբութիւն և քաւութիւն մեղաց՝

որովք ունէր նա յաղթական հանդիսանալ՝ ի վը-
սրտից ապգի մարդկան։ Յաղագս այսորիկ ասէ
ՅԱծարեալն Դաւիթ՝ ի վաթսուն և եօթնեերորդ
սաղմոսին, զի յորժամ Մեսիայն էլ վառօք՝ ի
բարձունս՝ հանդերձեալ էր գերել զգերեալսն,
առնուլ զաւար, բաշխել պարգևս և տալ որդւոց
մարդկանն։ Նա և Մարգարէն զյանկարծ-
ական գալուստ և զհոգեկան փրկագործութիւն
փրկչին մերոյ յառաջագոյն նկատեալ՝ գեղեցիկ
և վսեմական բանիւք բարբառի. Ահա ես առա-
քեմ զհրեշտակ իմ՝ և տեսցէ զճանապարհս ա-
ռաջի իմ։ և յանկարծակի եկեսցէ՝ ի տաճար իւր
Տէր՝ զոր դուք խնդրէք. և հրեշտակն ուխտի՝
զոր դուք կամիք։ ահաւասիկ գայ ասէ Տէր ա-
մենակալ։ Եւ ո՞ ժուժկալեսցէ առուր մտի նորա.
և կամ ո՞ հանդարտեսցէ յայսմանէ նորա։ զի
նա մտցէ էբրեալ զբոց հալոցի. և էբրեալ զօճա-
լուանողաց։ Եւ նստցի՝ ի ջո՛ւրել՝ որբեալ էբրեալ
զարծաթն՝ էբրեալ զոսկի. և որբեսցէ զորդիսն
ղևեայ. հալեսցէ զնոսա էբրեալ զոսկի՝ էբրեալ զար-
ծաթն. և եղիցեն Տ՚ մատուցանել պատարագս արդա-
րութեամբ։ Մաղաք. Գ. 1-3։

Այսպէս ուրեմն յայտնապէս երևի՝ ի
հանձայն գուշակութեաց մարգարէիցն առաջնոյ
ոլոր յառաջագոյն զՔրիստ մարգարէացեալ խօսե-

յան ոչ Հոգին սբ ազդէր ՝ի նա՝ զի անօրէնութիւնս ետարանին լինէր լրումն օրինաց. ՝ի վախճանել մեղայ. և ՝ի կնքել անօրէնութեաց և ՝ի ջնջել անիրաւութեաց և ՝ի քաւել ամենայն շտութեաց. և ՝ի գալ յաւիտենական արդարութիւն։ և ՝ի կնքել տեսլեան և մարգարէի. և յօծանել սրբութեան։ Դան. Թ. 24։

Այլ արդ՝ այժմ պատշաճ է մեզ դարձուցանել զիտս մեր՝ ի քննութիւն նորոյ կտակարանին։ Յորժամ Գաբրիել հրեշտակն գուշակեաց կուսին Մարիամու զի բնակեսցէ ի նմանակ ծննդեան որդւոյ նորա՝ յաւել և ասել նմա. Կոչեսցես զանուն նորա Յիսուս. (կամ Փրկիչ) զի նա փրկեսցէ զժողովուրդ իւր ՝ի մեղաց իւրեանց։ Մատ. Ա. 21։ Նա և Յովհաննէս մկրտիչն զփրկիչն ազգի մարդկան յուցանէ նոցին նկարագրութիւն. քանզի ասէ՝ ահա առասիկ գառն Աստուծոյ զմեղս աշխարհի։ Յովհ. Ա. 29։

Նա առանիկ՝ և ամենօրհնեալ ցն մեր խակ յայտ առնէ յաճախակի և որոշակի զմեծախորհուրդ նպատակ գալստեան իւրոյ յԾ. Զի եկն որդի մարդոյ լնուլ և կեցուցանել զկորուսեալն։ Ղուկ. Ժ. 10։ Որդի մարդոյ ոչ եկն պաշտօն առնուլ՝ այլ պաշտել. և տալ զանձն

եւ գրչեան գոլոնակ քարոզաց։ Մաթ։ Ի։ 28։
Այդ է արիւն իմ նորոյ ուխտի։ որ ՝ի վերայ բազ-
մաց հեղանի ՝ի թողութիւն մեղաց։ Մաթ։ Իզ։ 28։
Եւ ոչ Մովսէս բարձրայոյց զձեռն յանապատի։
նոյնպէս բարձրանալ պարտ է Որդւոյ մարդոյ։
Զի ամ որ հաւատայ ՝ի նա՝ ոչ կորիցէ։ այլ
ունիցի զկեանսն յաւիտենականս։ ։ ։ Զի ոչ
առաքեաց Աստուծ զՈրդի իւր յաշխարհ՝ թէ դա-
տեսցէ զաշխարհս։ այլ զի փրկեսցէ աշխարհս
նովաւ։ Յովհ։ Գ։ 14–17։ Ես եմ հայն
կենդանի՝ որ յերկնից իջեալ։ Եթէ ոք ուտի-
ցէ ՝ի հացէ յայմմանէ՝ կեցցէ յաւիտեան։ Եւ
հացն՝ զոր ես տայ՝ մարմին իմ է։ զոր ես տաց
վասն կենաց աշխարհի։ Յովհ։ Զ։ 51։ Նա և
զկնի հրաշափառ ամբարձմանն իւրոյ յերկինս՝
յորժամ ետ հաւատացելոցն Պօղոսի զառա-
քելական իշխանութիւն յաւել աւել ցնա։ Զի
վասն այսորիկ երևեցայ քեզ՝ առնուլ զքեզ ՝ի
ձեռն պաշտօնեայ և վկայ՝ որոյ տեսեր զնա։
և որում երևեցայց քեզ։ Փրկելոցքեզ ՝ի ժողո-
վրդենէդ՝ և ՝ի հեթանոսաց։ յորս ես առաքեցից
զքեզ։ Բանալ զաչս նոցա։ դարձուցանել ՝ի
խաւարէ ՝ի լոյս։ և յիշխանութենէ սատանայի
յԱստուծ։ առնուլ նոցա զթողութիւն մեղաց։ և զվիճակ
ընդ սրբս՝ հաւատովքն որ յիս։ Գործք։ Իզ։ 16–18։

Նա և բազում սոյնպիսի բանս ասացին առաքեալքն Տն մերոյ Յսի Քսի. յորոց դքանի ի օրինակս ծաղկաքաղ արարեալ դիցուք զկնի։

Ամենայնոր զմեղս գործէ, նա և զանօրէնութիւն առնէ, և ինքն խակ մեղքն անօրէնութիւն է։ Եւ գիտեմք՝ զի նա յայն սակս յայտնեցաւ՝ զի զմեղս իսպառեսցէ, և ի նմա մեղք ոչ են։ Ամենայն որ ի նմա է հաստատեալ՝ ոչ մեղանչէ. ՝՝ Յովհ. Գ. 4-6։ Եւ զի յայսմ երևեցաւ սէրն՝՝՝ ի մեզ՝ զի զորդին իւր միածին առաքեաց յաշխարհս՝ զի եղիցուք նովաւ կենդանիք։ Յայսմ է սէրն. ոչ զի մեք սիրեցաք զնա՝՝՝

ձերոյ ոմայնութեան Հայրենատուը գնայիցն ։
այլ պատուական արեամբն քո ։ իբրև ամբիծ
և անարատ գառին։ ՝ Պետր։ ՝ ։ 18 ։ 19։ Զի և
քո վասն մեր մեռաւ ... որ զմեր մեղս իւրով
մարմնովն վերացոյց ՝ի խաչափայտն ։ զի լիցուք
զերծեալք ՝ի մեղաց անտի ։ և իցեմք արդարութեն
կենդանիցք ։ որոյ վիրօքն բժշկեցայք։ Քանզի
էիք իբրև զոչխարս մոլորեալս։ այլ այժմ
դարձարուք առ Հովիւն և տեսուչ ոգւոյ ձե-
ղոյ։ ՝ Պետր։ Ա։ 21։ 24։ 25։ Զի ՝ի գործոյ
օրինաց ոչ արդարասցի ամ մարմին առաջի նորա ։
քանզի օրինօքն է գիտութիւն մեղաց։ Բայց արդ՝
առանց օրինացն իսկ արդարութիւն այ յայտ-
եալ է՝ վկայեալ յօրինաց անտի՝ և ՝ի մար-
գարէից։ Քանզի արդարութիւն այ ՝ի Հաւատոյ
անտի յիսուսի քրիստոսի Հաւատացեալս ։ և
ոչինչ է խտիր։ Քանզի ամենեքեան մեղան ։
և նուազեալ են ՝ի փառաց անտի այ։ Եւ արդա-
րանան ձրի նորին շնորհօք ՝ի ձեռն վերկութեան որ
՝ի քրիստոսի։ զոր յառաջն եդ այ ՝ի փրկութիւն ՝ի
ՀԵՌՆ ԻՄՈՒՈՅ ԱՊԵՆԱՆՔ ՆՈՐԱ ։ ՝ի Հանդէս արդա-
րութեան նորա վասն թողութեան յառաջագոյն մեղացն
գործելոյ ։ ՝ի ներելն այ ՝ի Հանդէս արդարութեան
նորա ՝ի ժամանակի յայսմիկ։ զի երկիցի նա
արդար ։ և արդարացուցէ զայն որ ՝ի Հաւա-

ասոյն յՇի։ Հռովմ. Գ. 20–26։ Զի որպէս
անհնազանդութիւն միոյն մարդոյ՝ մեղաւորք բա-
զումք եղեն. նոյնպէս և հնազանդութիւն միոյն
արդարք բազումք եղիցին։ Բայց օրէնքն՝ ի ներքս
անկան, զի յանցանքն բազմասցին. զի ուր առա-
ւել եղեն մեղքն, առաւել ևս յաւելան շնորհքն։
Զի ոպ թագաւորեսցին մեղքն՝ ի մահու անդ,
նոյնպէս և շնորհքն թագաւորեսցեն արդարութ
՝ի կեանսն յաւիտենից՝ ի ձեռն յՇի քՇի տն
մերոյ։ Հռովմ, Է. 19, 21։ Զի թՇակն
մեղայ մահ է, այլ շնորհքն այ կեանք յաւի-
տենից՝ ի քՇ յՇ տՇ մեր. Հռովմ. Ը, 23,
ՔՇ սիրեայ զեկեղեցի և զանձն իւր մատնեայ
վասն նորա. զի զնա սրբեսցէ սրբութ աւազանին
քանիւ. զի կայուսցէ ինքն իւր յանդիման փա-
ռաւոր զեկեղեցի, զի մի ունիցի ինչ արատ կամ
աղտեղութի, կամ այլ ինչ յայնպիսեայ. այլ
զի իցէ սուրբ և անարատ. Եփես. Է, 25–27։
ԱՇ փրկեայն զմեզ յիշխանութէ խաւարի, և
փոխեայ զմեզ յարքայութի որդւոյն իւրոյ սիրե-
լւոյ։ Որով ունիմք զփրկութի արեամբն նր, և
զթողութի մեղայ՝ մարմնովն նր. . . . Եւ զՀՇ
ոՀ երբեմն օտարայեալն էիք, և թշնամիք
խորհրդովք՝ ի գործսն չարութ, այժմ աւադիկ
հաշտեցարոյց անդամովք մարմնոյ իւրոյ՝ ի ձեռն

մահուն խրոյ, յանգիման կայուցանել զձեզ սքեա՛ և ամբիծս՝ և անարատս առաջի նորա։ Կոչ, ա, 13, 14, 21, 22։ Քանզի երևեցաւ շնորհն այ փրկիչ ամ՝ մարդկան. որ խրատել զմեզ՝ զի ուրասցուք զամբարշտութիւն և զաշխարհական ցանկութիւնս. զգաստութիւք և արդարութիւք և աստուածպաշտութիւք կեցցուք յաշխարհի։ և ակնկալցուք երանելի յուսոյն՝ և յայտնութիւն փառաց մեծին այ՝ և փրկչին մերոյ յԻսի քրիստի. որ ետ զանձն իւր վասն մեր, զի փրկեսցէ զմեզ յամենայն անօրէնութենէ, և սրբեսցէ իւր ժողովուրդ սեպհական՝ նախանձաւար գործոց բարութեան։ Տիտ. Գ. 11-14։

Հարք աստուածաբանք հանարին զարդարութիւն արեամբն Քրիստի և զսրբութիւն Հոգւոյն սրբով՝ իբրև վարդապետութիւնս տարբերս՝ ի միմեանց. բայց՝ թէպէտ և ըստ իմիք զանազանին սոքա յիրերաց, սակայն ի վերոյգրեալ բանից ծաղկաքաղ արարելոց՝ ի սէր գրոց յայտնապէս երևի, զի միաբանին նոքա ընդ միմեանս անտրոշաբար։ Երկոքին սոքա մի ապէս հարկաւոր են փրկագործութեան մարդկան. երկոքին սոքա բղխին՝ ի միոյ աստուածային աղբերէ. և զերկոսին զսոսա արք աստուածալք հանարին յառաջ եկեալ՝ ի պատարագէ Որդւոյն Այ։ Արդեօք կարգեաց աստ յառա-

ջագոյն զՔՆ 'ի քառութիւն 'ի ձեռն հաւատոյ արեամբն նորա։ Արդեօք վերացոյց նա իւրով մարմնովն զմեղս մեր 'ի խաչափայտն։ Արդեօք մաքրոյց նա զանձն իւր պատարագ ՚ի մեղաց մերոց։ Արդարև Որպէս ԱՅ պատարագ մատուցաւ՝ ոչ միայն ՚ի թողութիւն մեղայն գործելոյ և վասն արդարութեան զզջայեալ հաւատացելոյ, այլ և զի սրբեսցէ զեկեղեցին իւր սրբութեամբ աւազանին բանիւ, զի փրկեսցէ զմեզ յամ յանօրէնութիւն, զի սրբեսցէ զխիղճ մտաց մերոց 'ի մեռելոտի գործոց անտի՝ պաշտել զանձ կենդանի, զի լիցուք զերծեալք 'ի մեղաց անտի, և ելցեմ, պրպրութեան գենանէիցի։ Տես։ Է։ 14։ Եբր։ Ը։ 14։ ՝ Պետր։ Է։ 24։

Զի օրէնքն հոգւոյն կենաց 'ի քրիստոսի Յիսուսի առաքեալն՝ ազատեցին զիս յօրինաց մեղայն և մահու։ Զի որ անհնարին էր օրինացն՝ որով տկարանայր մարմնով։ ՚ած զորդին իւր առաքեաց 'ի նմանութիւն մարմնոյ մեղայ՝ և վասն մեղայ, և դատապարտեաց զմեղս 'ի մարմնի նոցա։ զի արդարութիւն օրինացն կատարեսցի 'ի մեզ, որք ոչ ըստ մարմնոյ գնացեմք՝ այլ ըստ հոգւոյն։ Հռովմ։ Ը։ 2-4։ Դարձեալ նոյն իսկ առաքեալն ասէ այսպէս։ Զի էաք երբեմն և մեք անմիտք անհաւանք՝ մոլորեալք՝ ծառայեաք ցանկութեանց և

պէսպէս անառակութեաց. Հարուբ՝ և նախանձու
թեաք, ատելութեաք՝ և զվիրաւոր ատելաք։ Իսկ
յորժամ՝ քաղցրութի՛ն և մարդասիրութի՛ն փրկչին մե-
ր՛ոյ՝ այ՛ յայտնեցաւ, ոչ՝ ի գործոց արդարութե՛ն
զոր արարաք մեք, այլ՝ �ումողորմութե՛ն
ապրեցոյց զմեզ՝ ի ձեռն լուացման մկրտութեան
ծննդեանն, և նորոգութե՛ն հոգւոյն սո՛ր։ զոր
եհեղ՝ ի մեզ առատութե՛ն, ի՛ ձեռն յսի՛ քրիստ
փրկչին մերոյ։ Տիտ. Գ, 9–6։ Եւ միրտեմ
զձեզ ջերմ յաղաշխարութի՛ն ասայ Յովհաննէս
մկրտչի՛ն Հրեից՝ բայց որ ղկնի իմ գայ՝ հզօրա-
գոյն է՛ քան զիս, և ես չե՛մ բաւական բառնալ
ղկօշիկս նորա։ Նա մկրտեսցէ զձեզ՝ ի հոգին
սո՛ր՝ և՝ ի հուր։ Մատ. Գ, 11։ Յովհ. Ա՛Ա,
26։ ՝՝ Յովհ. Ա՛, 27։

Հուսկ ապա ուսանիմք յաստուածաբանեալ մատեա-
նագրեալ անտի, զի նոյն իսկ միջնորդն նորոյ
ուխտին, որ եղև՝ ի քաւութի՛ն մեղայ մերոյ և
հեղու՝ ի վերայ ազգի մարդկան զպարգևս և
զշնորհս Հոգւոյն սրբոյ՝ մարդասիրապէս բա-
ցեալ լինի՛ն ժողովրդոյ իւրոյ առաջի աթո-
ռոյն հօրն իւրոյ երկնաւորի։ Որդեակք իմ՝ ասէ
առաքեալն Յովհաննէս՝ զայս գրեմ՝ ձեզ՝ զի մի՛
մեղայք։ և եթէ մեղայսէ ոք, ունիմք՝ Բարե-
խօսս առ Աստ զյա՛ր քո՛՝ զարդարն և զանարատ,

ա Յովհ. Է, 1։ Իսկ արդ՝ ովքեր որ դատապարտ առնիցեն՝ ասէ առաքեալն Պօղոս. Քրիստոս՝ որ մեռաւն մանաւանդ թէ յարուցեալ իսկ է. և է ընդ աջմէ Աստուծոյ, որ և Աստուծոյ իսկ է վասն մեր. Հռովմ. Ը, 34։ Իսկ սա վասն յաւիտեան կալոյ՝ առանց անցանելոյ ունի զքահանայութիւն։ Ուստի և կենդանի առնել համօրէն կարող է զմատուցեալս նովաւ առ աստուծ. քանզի միշտ կենդանի է՝ լինել Աստուծոյ։ Եբրայ. Է, 24, 25։

Ահաւասիկ ընդ Աստուծոյ՝ այսոքիկ են հզօրքդ և համանձայն բանքն՝ զորս առանդեցին մեզ մարգարէքն և առաքեալքն յաղագս մեծի խորհրդոյ փրկութեանն։

Արդ՝ արժան է մեզ դառնալ անդրէն՝ ի լանդիր մեր առաջարկեալ. այսինքն՝ առ ի՞նչ զուգակշիռ վարձան Որդին Աստուծոյ՝ յորմէ ստեղծան որ ինչ յերկինս՝ ի վերս և որ ինչ յերկիր՝ ի խնարհ՝ հաճեցաւ մարդանալ զոկար բնութիւն մեր զգենուլ, բնակիլ՝ ի միջի մեր և մեռանիլ՝ ի վերայ խաչին։ Այսմ հարցական բանիս ունիմք տալ զբաւական և զդիւրմատոյ և զմեկնութեան։ Իբրև լսիցէ՞ ոչ ոք՝ և ամենակարող զօրութիւն Որդին Աստուծոյ՝ եկն յոտ առ՝ ի տիրկել զաղգ մարդկան, առ՝ ի ոչնչել զնոսա՝ ի կորստական վիճակէ իւրմանէ, ՝ի ազգ-

ցանել զնոսա ՝ի բռնութիւն սատանայի և ՝ի յաւի-
տենական կորստենէ . առ ՝ի լցուցանել զամ-
հոգեկան կարօտութիւնս նոցա . առ ՝ի հաշտե-
ցուցանել զնոսա ընդ Հօրն ամենակալողի հեղ-
մամբ արեան իւրոյ և բարեխօսութիւն իւրով .
առ ՝ի վերստին ծնանիլ և սրբել զնոսա շնորհօք
Հոգւոյն սրբոյ . առ ՝ի տալ նոցա զէծգիոնիկ
յախտից մեղաց և զաղաղանիսն ՝ի դժոխոյն
տանջանաց . և այսպէս յարդարել վասն նոցա
զանհուն յաւիտենականութիւն կատարեալ երջան-
կութիւն : Ահա՛ յանդիման երեւին մեզ աստանօր
նպատակք արժանիք վերհութիւն Որդւոյն Աստ ,
և վայելուչք այնմիկ յարգական սիրոյ և քաղցր-
ութիւն զոր ետոյց մեզ յայն երկնային և յԱծա-
ղունչ մատեան . զայնպիսի նպատակս առեմ՝ որք
հաւասարակշիռ են իւրում աստուածային մեծութիւն .
և ինքն ինքն էր բաւական առ ՝ի կատարել զայնս
արդեամբք . և մինչ մերոնակ մարմնոյ չարչա-
ռիւր , էակիս և փառակիս էր ընդ երկնային
Հայր իւր . և անձամբ բնութենակիս էր միայնոյ
Աստուծոյն Աստ : Որդարև՝ եթէ նկատեսցուք
զմարդկային բնութիւն Քրիստի , որով մոռաւ վասն
մեր և տակաւին չարչարակիս է տկարութեան
մերոյ , և եթէ նկատեսցուք զաստուածային բնութիւն
նորա՝ որոյ զօրութիւն կատարեաց զանհաւելի

խորհուրդ փրկագործութիւն մերոյ, իսկ և իսկ տեսցուք զզարմանալի յարակցումն՝ որ կայ ի միջ հոգեկան կարօտութեանց ազգի մարդկան և ի միջ անհուն ողորմութեանն Աստուծոյ։

Այլ արդ՝ կարի հարկաւոր է մեզ հաւատալ ի Քրիստոս Յիսուս, զի կարօղ լիցուք արժանանալ այնոցիկ շնորհաց՝ զոր Աստուծ անքննելի իմաստութեամբ իւրում կարգեաց վասն փրկութեան հոգւոց մերոց։ Այլ այս այնչափ ինչ զրեցաւ՝ ասէ աւետարանի՝ Յովհաննէս՝ զի հաւատայցէք եթէ Յիսուս է որդի Աստուծոյ։ և զի կենդանի յաւիտենական ընդունիցիք յանուն նորա։ Յովհ. է. 31։ Զի այնպէս սիրեաց աստ զՏ՝ ասէ նոյն ինքն Քրիստոս՝ մինչև զորդին իւր միածին ետ. զի ամենայն որ հաւատայ ի նա, մի կորիցէ՝ այլ ունիցի զկեանս յաւիտենական։ Յովհ. գ, 16։ Ես իսկ եմ յարութիւն և կեանք. որ հաւատայ ինձ, թէպէտ և մեռանի՝ կեցցէ։ Եւ ամենայն որ կենդանի է՝ և հաւատայ ինձ, մի մեռցի յաւիտեան։ Յովհ. ժա, 25, 26։ Նա և սրբազան Պօղոս առաքեալն ասէ. Զայս գիտեմք՝ եթէ ոչ արդարանայ մարդ ի գործոց օրինաց. եթէ ոչ՝ ի հաւատոցն Յիսուսի։ Գաղ. բ, 16։ Դարձեալ Յովհաննէս մկրտիչն՝ յորժամ վկայէր զզօրութիւն և զգերազանցութիւն

Տն Յն՝ յայտնապէս եկոյց զՀեռեւանս հաւատալոյ և ոչ հաւատալոյ զՈրդին Աստ. Որ հաւատայ Որդւոյ ընդունի զկենաւն յաւիտենական. և որ ոչն հնազանդի Որդւոյ՝ ոչ տեսցէ զկենաւն. այլ բարկութիւն Աստուծոյ՝ մնայ ի վերայ նորա. Յովհ. գ. 36։

Այլ արդ՝ հաւատալն՝ի Քն՝ որոյ սէր գիրքն քարոզեն զվերկրութիւն հոգւոյս մերոյ՝ ոչ է լոկ ընդունելն զպատմութիւն և զվարդապետութիւնս աւետարանին։ Այլ սիրելի հաւատ է արդարև ըստ ինքեան մեռեալ հաւատ. նա և գրեալ է՝ զի դեռ ևս հաւատան և տարսեն. Յակ. Բ. 19։ Փրկական հաւատն է այն կենդանի և գործնական ունակութիւն մտայ մերոյ՝ որով՝ ի ձեռն քաղցր ներգործութեան սիրոյն Աստ ընդունիմք զՅն Քն իբրև զմիայնակ Տէր մեր և փրկիչ. Հաշակեմք հուսով զՔն իբրև զհայր կենաց՝ որ յերկնից իջեալ. խոնարհութեամբ և երկիւղածութեամբ յուսամք յամենաքաղցր յողորմութիւն և՝ ի զօրութիւն նորա։ և հաստատեալ հաւատով ընդունիմք սրտի նուիրեմ զանձն մեր գլուխն հոգեկենդանոյ եղեալոնութիւն նորա։ Ահա քեզ ընթերցող՝ հաւատք սիրով յաջողեալք. Գաղ. Ե. 6. այս է հաւատն այն՝ որ տայ մեզ բերել զյանկալի պտուղս սրբութեան, սիրոյ, հեզութեան, համբերութեան, խնդութեան և խաղաղութեան։ Բայց եթէ ինչ՝ ի

քո նոր աբարած իցէ։ զի հինն անց, և արդ նոր եղև ամ։ Բ Կորնթ։ Բ, 17։

Ընթերցող՝ գիտէն զտկարութի հոգւոյ մերոյ։ մանաւ չափ եմք հիւանդացեալ։ մանաւանթ հիւանդութի մեզայ է՝ ի ներքս՝ ի հոգիս մեր շարաւացեալ և թարախալից եղեալ։ և զի՞արդ հնար իցէ մեզ յախտից աստի ողջանալ, եթէ չկամիցիմք ընդունիլ զառ՝ ի յԱՅ կարդեալ սղեղանիս։ Ապա ուրեմն ջանասցուք՝ ի բաց ձգել յանձանց զչար սիրտն անհաւատութիւն։ այլ ոչ ևս ժամանակաւ լիցուք՝ ի սկեպտիկեան խորհուրդս յաղագս տեսանելոյ ճշմարտութիւն կրօնի։ այլ յաւէտ բուռն հարցուք զիսկութիւն նորին, և փախիցուք՝ ի բարկութենն՝ որ գալոցն է։ Ունկնդիր լիցուք բանիցն սիրոյ և քաղցրութեան՝ որոյ ողորմած փրկիչն մեր յինքն հրաւիրէ զմեզ։ Եկայք առ ինձ (ասէ Քրիստոս) ամենայն վաստակեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ։ Առէք զլուծ իմ՝ ի ձեզ, և ուսարուք յինէն՝ զի հեզ եմ և խոնարհ սրտիւ։ և գտջիք հանգիստ անձանց ձերոց։ Զի լուծ իմ քաղցր է, և բեռն իմ փոքրագի։ Մատ։ Ժ, 28–30։ Արդարև պարտ և պատշաճ է մեզ ամենեցուն առնուլ յոյս մեր զլուծն Քրիստի։ Ահա լաւ է ունկնդրուլ քան զզոհ ըն-

ՀԱՅԿ ԱՌԱՔԵԼՈՅ
ԵՐՈՒՍԱԼԵՄԻ
ԱՍՏԱԾԱԲԱՆԱՐԱՆ

տիր. և հնազանդուիք քան զՀաւատ խոյսոյ. ՝ Սամ, ՃԷ, 22 ։ Եւ քանզի պատարագն Քրիստի ՝ի Հաշտութիւն ածէ զմեզ լնդ Հօրն ամենակալի, աղէ զմնուա ածցուք զի հնար է մեզ գտանել զկատարեալ սրբութիւն սրտի, և զօրհնութիւն ՝ի Հաշտութիւնն անտի, միայն կատարելապէս ինապանդելով զսրութիւն և առաջնորդուիք Հոգւոյն սրբոյ։ Ամենաբարեկամն փրկիչն մեր Հոգւովն սրբով փոխէ զնանրախոհ սիրտս մեր, մեռուցանէ զմեղապերկիր յօժարութիւնս մեր, հալորդէ մեզ զբնութիւն իւր սուրբ, զօրայուցանէ զմեզ զնալ առաջի նորա մաքրութեամբ և սիրով։ և այսպէս պատրաստէ զմեզ առ ՝ի վայելել զայն երկնային ժառանգութիւն՝ զոր արժանաւորապէս ստացաւ վասն մեր կատարեալ հնազանդութեամբ իւրով և զանձն իւր ՝ի վերայ խաչին պատարագ մատուցանելով։ Լոկ ելեալ ընդ լոյս գնացցեմք, որպէս և նա լոյս է՝ ասէ առաքեալն Յովհաննէս՝ հաղորդութիւն ունիմք ընդ միմեանս, և արիւնն յիսի որդւոյ նորա սրբէ զմեզ յամ՝ մեղաց։ ՝ Յովհ. ՝ , 7։

Արդարև ուղղափառ դաւանութիւն հաւատոյ ևս անզօր և անաբդիւն եղիցի, եթէ հաւատ մեր ոչ ունիցի գործերգործութիւն ՝ի վերայ որոյ մերոյ, և ոչ տայցէ զօրինաւոր պտուղս.

այսինքն՝ զԲարեբաղաս վարս և զԼեռնայս։ Ամենայն մանն կրօնին քրիստոնէութեան կարգեալ է առ՝ի պտղաբերել զԳոծիկեան առաքինութիւնս։ և յաւուր որոտընդոստ և արդար դատաստանին Աստուծոյ դատապարտուելոց մեր առաւել ևս ծանրագոյն, եթէ այժմ լսիցուք, իմանայցուք և հաւանիցիմք զբանն Տեառն, բայց տակաւին յամր և անփոյթ լինիցիմք առ՝ի կատարել զպատուիրանս նորա։ Ո՛չ եամ որ ասէ ցիս՝ տէր տէր, մտցէ յարքայութիւն երկնից։ այլ որ առնէ զկամս հօրիմոյ որ յերկինս է։ ։ ։ Եւ եամ որ լսէ զբանս իմ զայսոսիկ և ոչ առնէ զոսա, նմանեսցի առն յիմարի՝ որ շինեաց զտուն իւր՝ ի վերայ աւազոյ։ Իջին անձրևք՝ յարեան գետք, շնչեցին հողմք՝ հարին զտունն, և անկաւ։ և էր կործանումն նորա մեծ յոյժ։ Մաթ։ Է։ 21, 26, 27։

Այլ արդ՝ մինչ ողբալով լամք՝ ի վերայ մեղայ մերոյ, արժան է մեզ լալ՝ ի վերայ մեղայ ազգի մարդկան։ պարտ է մեզ խորին տրտմութեամբ սրտի զանձինս մեր խոնարհեցուցանել առաջի Աստուծոյ երկնաւորի, յորժամ զմտաածեմք զանչափ չարութիւն Ստեղծողին մերոյ, և յորժամ խորհիմք զտութիւն և զյոխութիւն և զանառակութիւն և զչարութիւն և զանօրէնութիւն և զարիւնհեղութիւն և զայլ գործս մեծեղեւն

յանցանայ՝ զորս տակաւին գործեն անէրկիւղ որդիքն Ադամայ։ Բայց սակայն՝ ի սէր աւետարանի անդ գոյ կոչիչ ապաշխարութեան երկնային, որով հնար է բժշկել և խափանել զամ բարոյական յանցանս և զվէրս հոգւոյ։ Արա ուրեմն եկ ընթերցող՝ ի միասին յաղօթս կայցուք առ Աստ զի փութանակի եկեալ ժամանեսցէ օրն այն յորում տէրութիւնն Յիսի տարածեալ ձգեսցի մինչև՝ ի ծագս աշխարհի։

Արա ուրեմն՝ մինչ զգամք յանձին զիրկուն՝ ի մեղայ և՝ ի գերութեան սատանային՝ ի ՀԵՌՆ ԿՈՒՍՈՑ ՈՐ ՅՈՒՐԷՆ ԱՅ, և ակնկարոյց եղեալ սոյսեմք տիեզերական տարածութիւն սրբարար կրօնին քրիստոնէութիւն, տարածեսցուք զմեզ ամ պատկառանօք և խոնարհութեամբ առաջի յաւիտենականին ԱՅ. և ձայնակից լիցուք աստուածաբան ասելոյ՝ հնարք ԱՅ՝ ի վերայ անպատուամ պարգևայն նորա։

Յ. Ա։